ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՈՉՃՇՄԱՐԻՏ ՏԱՐՐԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

Իրավաքաղաքական խոսույթը համադրական բարդ գործընթաց է, որի տարրերի էությունը բացահայտելը շատ կարևոր է իրավաքաղաքական գործընթացները հասկանալու և կառավարելու առումով:

Իրավաքաղաքական ցանկացած խոսույթ, մանավանդ եթե այն կոնֆլիկտային է, անկախ *ճշմարտության* առկայությունից, սովորաբար պարունակում է *ոչճշմարիտ*[1] տարրեր՝ պնդումներ, եզրահանգումներ և այլն: Այս *ոչճշմարիտ* առավել նշանակալից տարրերից են՝ *սուտը, սխալը, մանիպուլյացիան, նարատիվը, քաղաքական միֆը, սիմուլյակրը* և այլն: Հասկանալի է, որ սրանց գոյությունն ու իմաստը բացահայտվում են *ճշմարտության* հետ հարաբերակցվելիս, որովհետև առանց *ճշմարտության* (թեկուզ հստակ չորոշարկված իմաստով) գոյության սկզբունքորեն հնարավոր չէ սրանցից ոչ մեկի մտածումը, այսինքն՝ գոյությունը: Ինչպես Անրի Բերգսոնն է ցույց տվել, ժխտումը չի կարող ունենալ ինքնին կեցություն, այն միշտ հաջորդում է ինչ-որ հաստատական պնդման: Այսինքն՝ երբ պնդում են ինչ-որ բանի չգոյությունը, իրականում պնդում են մեկ այլ հաստատական մտքի սխալ լինելը: Արտահայտված կամ չարտահայտված ցանկացած ժխտական պնդում հավելում է հաստատմանը, որովհետև ինչ-որ առարկայի պարզապես մտածվելն ու դրա՝ որպես գոյություն ունեցող մտածվելը, նույնն են: «Այսպիսով, - եզրակացնում է Ա. Բերգսոնը, - եթե հաստատումն անմիջապես վերաբերում է իրին, ապա ժխտումն իրը դիտում է միայն անուղղակիորեն՝ միջանկյալ հաստատման միջոցով: Հաստատական նախադասությունն արտահայտում է որևէ դատողություն. ժխտական նախադասությունն արտահայտում է որևէ դատողությանը վերաբերող դատողություն»[2]:

Համաձայնելով մտածողի փաստարկումներին՝ կարելի է պնդել, որ իմացական ցանկացած *ոչճշմարիտ* երևույթ ենթադրում է *ճշմարտության* կանխատրվածություն, որովհետև *ոչճշմարիտը ճշմարտության* մասնավոր ժխտումն է, ուստի ելակետվում է *ճշմարիտի* ընդհանրապես գոյությունից:

---

[1] «Ոչճշմարիտ» հասկացության այսպիսի կիրառությունն ունի հատուկ նպատակ. սրանով նշվում է գոյաբանական օբյեկտ՝ ի տարբերություն «ոչ ճշմարիտ» հասկացության, որի նշանակյալը, լինելով մտքի հատկանիշ, բացահայտում է տվյալ մտքի ճշմարիտ չլինելը:

[2] **Ա. Բերգսոն**, Մետաֆիզիկայի ներածություն: Ստեղծարար էվոլյուցիա, Եր., 2003, էջ 343:

Ընդհանրապես, *ճշմարիտը* գտնելը և համոզված լինելը, որ գտնվածը ճշմարիտ է, կա՛մ շատ դժվար է, կա՛մ՝ անհնար[3]: Իսկ իրավաքաղաքական գործունեության շրջանակներում խնդիրն ավելի է բարդանում, որովհետև եթե զուտ գիտական գործունեության բնագավառում *ճշմարտության* փնտրտուքը, հանդիպում է օբյեկտիվորեն առկա բարդությունների, ապա իրավաքաղաքական ոլորտում առաջնայնությունը տրվում է գործորդների շահին: Եվ *ճշմարտությունն* անտեսվում կամ խեղաթյուրվում է հենց այն պատճառով, որ *ճշմարտություն* է:

Ճշմարտության փնտրտուքը (անկախ դրա ինքնին գոյություն ունենալ-չունենալուց) և՛ տրամաբանական, և՛ պատմական տեսանկյուններից սկսվում է հենց *ոչճշմարտի* առկայության գիտակցումից: Հայտնի է, օրինակ, որ մինչև տրամաբանական կանոնների համակարգված ու գիտակարգայնորեն ներկայացվելը սոփեստներն արդեն միտումնավոր խախտում էին դրանք: Այսինքն՝ տրամաբանական օրենքները պատմականորեն նախ և առաջ կիրառվել են *ոչճշմարիտ* մտակառույցներ ստեղծելու նպատակով:

Ոչճշմարիտը նախորդում է *ճշմարիտին* (ինչպես նաև՝ չիմացությունն իմացությանը) նաև վերպատմական՝ տրամաբանական մակարդակում: Ճանաչողության սուբյեկտը, նախքան ինչ-որ բան ճանաչելուն հակվելը, պետք է գիտակցի, որ ինքն այդ չգիտի: Այսինքն՝ իմացության սկիզբը չիմացության գիտակցումն է[4]:

Ի դեպ, ճանաչողության գործընթացում կանխակալ, սխալ ու չհիմնավորված տեսակետից ելակետվելը հիմնարար գործառույթ ունի Կ. Փոփերի ճանաչողության տեսության մեջ, որի ազդեցությունը հսկայական է արդի մեթոդաբանության և էպիստեմոլոգիայի վրա: Նա գտնում է, որ ճանաչողական նոր բովանդակությունը ստացվում է ստեղծագործական և իռացիոնալ (բերգսոնյան իմաստով) գործընթացների միջոցով[5], իսկ ձեռք բերվածի հավաստիությունը պետք է ստուգվի «փորձ և սխալ» սխեմայի դեդուկտիվ կիրառությամբ: Փոփերի համար սովորելու այս մեթոդն այնքան հիմնարար է, որ այն վերագրում է ոչ միայն իմացությանն ընդհանրապես, այլև ցանկացած արարածի, որն ունակ կլինի սովորելու ինչ-որ նոր բան[6]:

Այս ամենը լիովին արդարացնում և/կամ ստիպում է *իրավաքաղաքական խոսույթը* վերլուծել ոչ միայն *ճշմարտության*, այլ նաև *ոչճշմարտության* դիրքերից:

Հատկանշական է, որ իրավաքաղաքական խոսույթում կան այնպիսի տարրեր, որոնց էական հատկանիշներից մեկը *ճշմարիտ-սխալ* չափումից դուրս լինելն է, ինչպես օրինակ՝ *միֆը* կամ *սիմուլյակրը*:

---

[3] Տե՛ս **Popper R. K.**, Conjectures and refutations, The growth of scientific knowledge, New York, 1962, էջ 226:

[4] Տե՛ս **Чанышев А. Н.**, Начало философии. М., 1982, էջ 11:

[5] Տե՛ս **Popper K.**, The logic of scientific discovery. London and New York, 2002, էջ 8:

[6] Տե՛ս **Popper R. K.**, Conjectures and refutations, The growth of scientific knowledge, էջ 215:

Սակայն այս չափմանը ենթակա չլինելը բնավ չի նշանակում, որ դրանք իրենց գոյաբանական հիմքը *ճշմարտությունից* չեն ստանում: Ընդհակառակը, իրականում դրանց իմաստավոր գոյությունը *ճշմարտության* գոյության փաստարկ է: Բոլոր այն իմացական երևույթները, որոնք իմաստավորվում են՝ դուրս դրվելով *ճշմարիտ-սխալ* չափումից, այս վերջինից գոյաբանական կախվածություն մեջ են ընկնում, որով և փաստում են *ճշմարիտի* անհրաժեշտ գոյությունը: Սույն հարաբերությունը համանման է Դավիթ Անհաղթի՝ փիլիսոփայության գոյության վերաբերյալ պիհոռոնականության դեմ ուղղված հակափաստարկին, ըստ որի՝ փիլիսոփայությունը հերքելը փիլիսոփայություն է, այսինքն՝ փիլիսոփայության գոյության ապացուցում[7]:

Իրավաքաղաքական խոսույթի բաղկացուցիչ տարրերը գործնականում կիրառվում են և՛ համադրված (փոխներթափանցված), և՛ առանձին-առանձին, ու կարելի է ասել, որ դրանց քանակն անհայտ է: Կարելի է պնդել, որ անհայտ են նաև դրանց հնարավոր փոխհարաբերությունները, որովհետև դրանք կարող են այնպիսի բարդ ու քաոտիկ փոխներթափանցվածություն ունենալ, որ անհնար լինի դրանց ընդհանուր դասակարգումն ու հարաբերությունները բացահայտելը: Այս անորոշությունների կողքին առկա են նաև այնպիսի բաղկացուցիչ տարրեր, որոնք տեսանելի են, սակայն անվանված և իմաստավորված չեն: Հասկանալի է, որ անվանումն ու իմաստավորումն անհրաժեշտաբար ենթադրում են միմյանց, իսկ սրանց առկայությունը հնարավորություն է ընձեռում տիրապետելու և կարգավորելու իրադրություններն ու երևույթները, որովհետև «... աշխարհը կառավարելու և դատարկությանը տիրելու համար մենք բառերի կարիքն ունենք»[8]: Ուստի սույն վերլուծության բուն նպատակն է մատնացույց անել (նկարագրել) իրավաքաղաքական խոսույթում նկատելի բաղկացուցիչ տարրերից մեկը, որը մինչև այժմ անվանված և իմաստավորված չէ: Այս նպատակն իրագործելու համար նախ հարկավոր է անդրադառնալ իրավաքաղաքական խոսույթի այնպիսի տարրերի, որոնք անվանված, իմաստավորված և քիչ թե շատ պարզաբանված են:

Այսպես, իրավաքաղաքական խոսույթի *ոչճշմարիտ* տարրերից առավել հաճախակի կիրառվողները *սուտը* և *սխալն* են: *Սխալ* է անվանվում *ոչճշմարտության* այն տեսակը, որը պնդում է իրերի և երևույթների այնպիսի դրության մասին, որն իրականում չկա: *Սխալը*, լինելով մոլորության կամ չիմացության արտահայտություն, ինքնին զուրկ է դիտավորությունից: Իսկ *սուտը*, ի տարբերություն սխալի, հետապնդում է *ճշմարտության* տեղն զբաղեցնելու նենգ միտում՝ թաքցնելով իր *ոչճշմարիտ* լինելը: Ե՛վ *սխալը*, և՛ *սուտը* արտահայտում են գոյություն չունեցող իրադրություն, սակայն *սուտն* արտահայտողը գիտի դրա

[7] Տե՛ս **Դավիթ Անհաղթ**, Երկեր, Եր., 1980, էջ 45:
[8] **Bottici Ch.**, A Philosophy of political myth, New York, 2007, p. 118.

այդպիսին լինելու մասին ու հենց դրա համար էլ արտահայտում է, իսկ *սխալն* արտահայտողը չգիտի, ու քանի որ զերծ է նենգ մտադրությունից, ապա այն չէր արտահայտի, եթե իմանար դրա *ոչճշմարիտ* լինելը: Ուրեմն *ստի* էական հատկանիշը նենգ շարժառիթով ասված լինելն է:

Մանիպուլյացիան նույնպես *սխալի* (հաճախ *ճշմարիտին* միացված) արտահայտություն է, որը «...մարդկանց վարքն իշխանության տակ առնելու միջոց է՝ հոգևոր ազդեցություն ծրագրելու ճանապարհով»[9]: Սա *ստի* նման նենգ և միտումնային է, սակայն ավելի «հարուստ» է, որովհետև այն միայն մտակառույց չէ, այլ նաև՝ գործողություն և գործելակերպ:

Ինչպես իրավաքաղաքական խոսույթի բաղկացուցիչ մյուս բոլոր տարրերը, այնպես էլ *մանիպուլյացիան* կարող է հիմնված լինել ինչ-որ *նարատիվի* վրա և/կամ ներառել *նարատիվներ*: Այս՝ *նարատիվ* հասկացության էության բազմակողմանի բացատրությունը տվել է ֆրանսիացի փիլիսոփա, պոստստրուկտուրալիստ Ժան-Ֆրանսուա Լիոտարը՝ իր «Հետարդիականության իրավիճակը» հիմնարար աշխատության մեջ: Օրինակ՝ ըստ նրա՝ հետարդիական իրավիճակը բնութագրվում է *նարատիվների* նկատմամբ հասարակական անվստահությամբ, որը մշակութային փոխակերպման հետևանք է, որով 19-րդ դարում տեղի են ունեցել գիտության, գեղարվեստական գրականության և արվեստի խաղի (լեզվական) կանոնների փոփոխությունները:

Ֆրանսիացի փիլիսոփան *նարատիվը* բացատրում է մասնավորապես գիտության (կրթության) և իշխանության լեգիտիմացման համատեքստում, ըստ որի՝ գիտության, բարոյականության և իշխանության լեզուները միմյանց հարազատ են: Իշխանության լեգիտիմացումը մարդկանց որոշակի խմբին որոշակի վարքագիծ դրսևորելու պահանջ ներկայացնելու գործընթացն է: Իսկ գիտության լեգիտիմացումը այս նույն գործընթացի կրկնությունն է, այսինքն՝ հայտարարվում է, որ լեզվական որոշակի կառույցը, արտահայտման ձևը և այլն համարվում են գիտություն: Որոշում կայացնելու այս երկու գործընթացներն էլ հիմնված են «Արևմուտք» *նարատիվի* վրա: Լիոտարը նկատում է, որ գիտության և օրենսդրության կապը առաջին հայացքից կարող է մտացածին թվալ, սակայն դա իրական է. «... գիտելիքն ու իշխանությունը միևնույն հարցի երկու կողմերն են. ո՞վ է որոշում, թե ինչ է գիտելիքը, և ո՞վ գիտի, թե ի՛նչ է հարկավոր որոշել: Տեղեկատվության դարաշրջանում գիտելիքին վերաբերող հարցը առավել քան երբևէ վերածվում է կառավարման հարցի»[10]:

Նարատիվները, որոնք հիմնավորում են մարդկային հավանաբար բոլոր գործողությունները, ոչ մի հիմք չունեն. դրանք միշտ սկզբնային են և կանխատրված: Դրանք ոչ միայն հաղորդում են համապատաս-

---

[9] **Кара-Мурза С.** Манипуляция сознанием. М., 2005, с. 32.

[10] **Лиотар Ж. - Ф.** Состояние Постмодерна. СПб., 1998, с. 28.

խան վարքականոններ, այլև բացատրում, հիմնավորում և լեգիտիմացնում են բոլոր չափանիշները, այդ թվում նաև իրենց իսկ գոյության ու արտահայտման լեգիտիմ ձևերը, միջոցները և բովանդակությունը: Ըստ Լիոտարի՝ այս ամենն իմանենտ է *նարատիվին*:

Նարատիվը կարող է լինել լուսավորչական հերոսի վերաբերյալ, որն անշահախնդրորեն աշխատում է հանուն ճշմարտության և արդարության: Այն կարող է վերաբերել մի ամբողջ ժողովրդի, որին գիտության, գիտության ազատության և ընդհանրապես ազատ լինելու հարցում խանգարել են կա՛մ հոգևորականները, կա՛մ ինչ-որ բռնակալ:

Ֆրանսիացի հեղինակը հստակ չի ասում, թե *նարատիվն* անպայման քաղաքական պետք է լինի, սակայն, ինչպես վերը տեսանք, քաղաքականի ամբողջատիրականությունը (տոտալությունը) ուղղակի կամ անուղղակի կլանում է բոլոր հնարավոր *նարատիվները*:

Նարատիվները, ըստ Լիոտարի, հասարակական կարևորագույն և էական գործառույթներ են ունեցել նախքան մոդեռնի ժամանակաշրջանը, իսկ այդ ընթացքում դրանց գործառական կարևորությունն ու ամբողջայնությունը հասել են իրենց գագաթնակետին, սակայն ներկայումս՝ պոստմոդեռնի պայմաններում, դրանց կարևորությունն աստիճանաբար ստվերվում է: Այն, որ *նարատիվները* այլևս չունեն իրենց նախկին ազդեցությունը, բնավ չի նշանակում, թե դրանք ընդհանրապես դադարել են գործառելուց: Իրականում *նարատիվները* շարունակում են մնալ իրավաքաղաքական խոսույթի ամենաազդեցիկ և քանակական գերակշռություն ունեցող բաղկացուցիչ մասը:

Քաղաքական *նարատիվի* տեսակներից է քաղաքական *միֆը*, որը սահմանելու կամ բացատրելու հարցում մասնագետների շրջանում չկա միկարծություն: *Միֆի* (ոչ միայն քաղաքական միֆի) էությունը բացատրելու խորհրդանշանային, գաղտնագրային, ծիսական, էֆիմերիստական և տարածում գտած այլ տեսություններ շատ խնդրահարույց են և՛ փաստական, և՛ տրամաբանական առումներով: Խնդրահարույց է նաև *միֆն* ինքնին: Լայնորեն ընդունված կարծիքի համաձայն՝ «միֆ» հասկացությունը կիրառվում է մի այնպիսի պատում (նույնպես քաղաքական) նշանակելու համար, որը պարզապես ճշմարիտ չէ: Այսպիսի մոտեցումն ընդունելի է, եթե միայն ասվածը փոխաբերական մեղադրանք է: Խիստ իմաստով սա սխալ մոտեցում է, որովհետև «... միֆում առկա են միֆական ճշմարտությունը, ճշմարտության հենց իր՝ միֆական չափանիշներն ու հավաստիությունները, միֆական օրինաչափությունները...»[11]: Ուստի *միֆի* հնարավոր դիտարկումը գիտափիլիսոփայական ճշմարիտ/սխալ չափման ներքո կնշանակի *միֆը* «վերածել» հոգևոր մշակույթի մեկ այլ ձևի և պահանջել, որ այն բավարարի այդ ձևի չափանիշները: Ճշմարիտ/սխալ չափման ներքո նման դիտարկումը, ի տարբերություն *միֆի*, կիրառելի է «լոգոս»-ի նկատմամբ, որը

[11] **Лосев А. Ф.** Диалектика мифа. М., 2001, с. 55.

եղել է *միֆի* հոմանիշը։ Սակայն հետագայում *լոգոսն* սկսում է ըմբռնվել որպես միակ (մոնիստական) ճշմարիտ Աստծո գրի առնված կամք՝ ի հակադրություն միֆական պլյուրալիզմի[12]։ Մոնիստական Աստծո միակ ու բացարձակ լինելու պահանջը (վերա)հաստատվում է Ծննդոց գրքում, երբ Աստված Մովսեսի այն հարցին, թե ի՞նչ է իրեն հայտնված Աստծո անունը, պատասխանում է. «Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ» (Ելից Գ։14)։ Ի հակադրություն այս կրկնաբանական բացարձակության՝ օրինակ, հեսյոդոսյան աստվածներին մուսաներն են հայտնում նրանց ով լինելը։ Այսպիսով, *միֆը*, ի տարբերություն *լոգոսի*, ունի պլյուրալ էություն, որը նրան դուրս է դնում ճշմարիտ/սխալ չափումից. ահա թե ինչու ներկայումս գերիշխում է այն համոզմունքը, որ *միֆը* «... ոչնչով ապացուցելի չէ և պետք էլ չէ, որ ապացուցելի լինի»[13]։

Ըստ Հենրի Թյուդորի՝ *միֆը* նման է և՛ փիլիսոփայությանն ու գիտությանը, և՛ առակին ու հեքիաթին, սակայն էականորեն տարբերվում է սրանցից։ Հոգևոր մշակույթի այս տեսակները *միֆի* նման բացատրում են աշխարհակառույցը, իրերի կապերը, մարդու տեղն ու դերն աշխարհում, հաղորդում են բարոյական նորմեր և այլն։ Սակայն փիլիսոփայությունն ու գիտությունը իրողությունները բացատրում են՝ դրանք դասակարգելով ինչ-որ ընդհանրական օրենքի կամ սկզբունքի ներքո, իսկ առակի և/կամ հեքիաթի բովանդակության անիրական լինելը գիտեն և՛ պատմողը, և՛ լսարանը։ Իրողություններ, որոնք հատուկ չեն *միֆին*։

Միֆը նման է նաև պատմությանը, իսկ *միֆի* շինարարը՝ պատմաբանին։ Ե՛վ պատմությունը, և՛ *միֆը* հակված են դեպի իրական պատումը, սակայն եթե պատմաբանն իր հաղորդման իրական լինելը ցույց տալու համար փնտրում, գտնում և վկայակոչում է պաշտոնական փաստաթղթեր, վկայություններ, հնագիտական գտածոներ և այդ ամենը համակցում է անկողմնակալորեն, ապա *միֆի* շինարարին հետաքրքրում է հնարավոր պատումի միայն գործնական-օգտապաշտական կողմը։ Պատմաբանը փորձում է գտնել տրամաբանական կապեր իր նկարագրած դեպքերի և տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցած այլ իրողությունների միջև, իսկ *միֆի* շինարարը ձգտում է կա՛մ պաշտպանել գործողությունների մի որևէ ուղղվածություն, կա՛մ արդարացնել գոյություն ունեցող (ունեցած) ինչ-որ կարգ։ Պատմաբանը պարտավոր է հաշվի առնել բոլոր էական փաստերը, իսկ *միֆի* շինարարը փաստերին մոտենում է ընտրողաբար։ Սա չի նշանակում, թե *միֆի* շինարարը կարող է պնդել անհնարինի եղելությունը կամ ճանաչված եղելության անհնարինությունը, այլ, անտեսելով պրոֆեսիոնալ պատմաբանների փաստարկները, իր լսարանին մատուցում է այն, ինչն ընդունելի է լսարանի համար և համապատասխանում է իր նպատակներին։

---

[12] Տե՛ս **Bottici Ch.**, նշվ. աշխ., էջ 45։

[13] **Лосев А. Ф.**, նշվ. աշխ., էջ 44։

Միֆի շինարարը պատումի դրամատիկացման միջոցով թիրախային խմբին տալիս է իրականության նպատակաուղղված ըմբռնում, ինքնանույնականացում և տեսլական: Եվ *միֆը միֆ* է դարձնում ոչ թե նրա օբյեկտը և/կամ բովանդակությունը (տարածված կարծիքի համաձայն՝ աստվածների կամ ֆանտաստիկ հերոսների մասին պատմելը), այլ դրա կառուցվածքի ու կիրառության յուրահատուկ ձևը: Իսկ *միֆի* տեսակը որոշվում է օբյեկտով ու բովանդակությամբ:

Պատմությունն ու արդի քաղաքական խոսույթը փաստում են, որ այս նկարագրության ներքո են տեղակայվում ոչ միայն «Հռոմի հիմնադրման» պես հնամենի կամ գիտաֆանտաստիկ ժանրին մոտեցող «Արիական ռասայի», այլև ներկայումս գործառող «Ամերիկայի հիմնադիր հայրերի» պատումները:

Այսպիսով, քաղաքական *միֆը* կարելի է սահմանել որպես նպատակայնորեն ընտրված դեպքերի պատում, որով թիրախային խմբերն ուղղորդվում են դեպի քաղաքական որոշակի ինքնանույնականություն[14]:

Իրավաքաղաքական խոսույթի հաջորդ տարրը, որին այստեղ անդրադառնում ենք, բոդրիարյան *սիմուլյակրն* է: Այս հասկացությունը բացատրելու համար հետարդիականության շրջանի ֆրանսիացի փիլիսոփան անդրադառնում է ինչպես մշակույթին ընդհանրապես, այնպես էլ մշակութային տարբեր ոլորտների և տեսակների, այդ թվում նաև գիտությանը, գեղարվեստական գրականությանը, արվեստին՝ նկարչությանը, կինեմատոգրաֆիային և այլն: Այս ամենի կիրառությամբ Ժան Բոդրիարը փաստարկում է, որ հետարդիական ժամանակաշրջանում մարդկությունն ապրում է աննախադեպ, յուրահատուկ կեղծ աշխարհում, որտեղ իրերը կրկնօրինակված են ոչ «ավանդական» ձևով: Դրանք նախ սպանվել են, հետո ստվերվել ու դուրս են մղվել ոչ միայն իրենց կյանքից, այլև իրենց մահից, իսկ կրկնօրինակները ավելի նման են իրականներին, քան հենց իրականները, որոնք սեփական մոդելի լույսի ներքո ավելի «ժպտերես» ու ավելի «վավերական» են: Ամենուր վերամշակում են կորուսյալ ունակություններ, կորուսյալ մարմին, կորուսյալ հասարակություն և նույնիսկ սննդի կորուսյալ ճաշակ: Կրկին հայտնագործվում են չքավորությունը, ճգնակեցությունը, անհետացած վայրի նախաստեղծությունը, բնական ու առողջ սնունդը: Մարդիկ այլևս միմյանց չեն նայում. դրա համար գոյություն ունի համապատասխան հիմնարկ: Դիսնեյլենդը, որն այս «իրականության» տիպական նմուշն է, լիովին նույնական է սեռական, հոգեբանական և սոմատիկ վերամշակումների ինստիտուտներին:

Ներկա ժամանակների այս սիմուլյակրային իրադրությունը սկսվում է «իմպլոզիայով» (implosion): Այս հասկացությունը, որը պատկանում է Բոդրիարին (ինչպես և՝ *սիմուլյակրը*, *պրեցեսյան* և այլն), թարգմանիչ մասնագետի բացատրության համաձայն, սերում է «explosion-պայթ-

[14] Տե՛ս **Tudor H.**, Political myth. London, 1972, էջ 116-139:

յուն» հասկացությունից, որը, ի հակադրություն այս սկզբնական ձևի, նախածանցի փոփոխության միջոցով ստանում է դեպի ներս ուղղված լինելու իմաստ[15]: Ըստ Բոդրիարի՝ ներկայումս միմյանցից բաժանված չեն ու չեն տարբերվում ավանդական բևեռները, սկիզբներն ու ավարտները. մեկը երկատվելով վերածվում է մյուսին, և սրանք ֆանտաստիկորեն բախվում են միմյանց: «Իմպլոզյան» պատճառականության պսպղուն ու տարբերակող ձևերի կլանվածությունն է, որով էլ սկսվում է սիմուլյացիան: Հոգեմտային այս յուրօրինակ պայթյունը, որը նշանակում է չտարբերակվածություն և իմաստային հակադիր զույգերի միաձուլում, սիմուլյացիայի խթանիչն ու գազաթնակետն է:

Սիմուլյակրի էությունը, որը խիստ հակասական է և գրեթե հնարավոր չէ սահմանել, լավագույնս արտահայտվում է Բոդրիարի այս աշխատության բնաբանում. «Սիմուլյակրը երբեք այն չէ, ինչը թաքցնում է ճշմարտությունը. այլ ճշմարտությունն է թաքցնում իր չգոյությունը: Սիմուլյակր. սա է ճշմարտությունը»: Գրքում որպես բնաբանի հեղինակ նշվում է աստվածաշնչյան Ժողովողը, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է թարգմանիչը, սույն միտքը Ժողովողի գրքում բացակայում է, ուստի այս բնաբանը կարող է ծառայել իբրև *սիմուլյակրի* նմուշ:

Սիմուլյակրը հետարդիականության ծնունդ է, որի շրջանակներում իրականությունը վերածվել է մոդելի, և անհետացել է նշանի ու իրականության միջև եղած հակադրությունը: Այն ամենուրեք է, և ամեն բան ինքնին *սիմուլյակր* է: Այս սիմուլյակրների և սիմուլյացիայի դարաշրջանում, ըստ Ժ. Բոդրիարի, այլևս չկա Աստված, որպեսզի տարբերի յուրայիններին, չկա նաև Վերջին դատաստանը, որով կեղծը կառանձնացվեր ճշմարիտից, իրականը՝ արհեստականորեն հարություն առածից, քանի որ ամեն ինչ արդեն իսկ մեռած է և կանխավ՝ մինչև մեռնելը, հարություն առած է: Ներկայումս գոյություն չունեն ո՛չ իրականը, ո՛չ էլ իրականին վերաբերող առասպելն ու նշանները: Առկա օբյեկտիվությունները, վավերականությունները կամ ճշմարտությունները բացառապես երկրորդային են՝ վերարտադրված ու վերամշակված: Ներկայիս իրականը և նշանակվողը ընդամենը նյութականին զուգահեռ, բայց գերակա արտադրանքներ են: Այս պայմաններում, երբ իրականությունը վերածվել է հիպերիրականության, սիմուլյակրները ոչ թե գոյություն ունեցող օբյեկտների պատկերումներն են, այլ այնպիսի օբյեկտների, որոնք գոյություն չունեն, այսինքն՝ սիմուլյակրները նշաններ են, որոնք չունեն նշանակվողներ: Իրականությունը մեռցվել է, իսկ նորիրականն ու գերիրականը գոյատևում են հանրային սարսափի ռազմավարությամբ:

Միջուկային կեղծ պատերազմի նկատմամբ սարսափը, որը տարածում են իշխանություններն ու զանգվածային լրատվամիջոցները,

[15] Տե՛ս **Печенкина О. А.** Эра тотальной симуляции, или искусственное воскрешение реальности // **Бодрийяр Ж.**, Симулякры и симуляция. Тула, 2013, էջ 16:

կենտրոնական դեր է խաղում Բոդրիարի հայեցակարգում։ Միջուկային բախման սարսափով կաթվածահար է արվում կայնքը, սակայն պատերազմը երբեք տեղի չի ունենա, որովհետև այդ սարսափը բացառում է պատերազմը։ Բայց ներկայումս չկա նաև սարսափող սուբյեկտը, ու չկա նաև պատմություն ընդհանրապես։ Այս իրավիճակում պատահարների միակ հեղինակը «մեդիումն» է՝ զանգվածային լրատվամիջոցները, որոնց արտադրանքը (ինչպես և ամեն ինչ) մարդիկ կլանում և հոշոտում են։

Այս իրադրության մեջ նույն սիմուլյատիվ կարգավիճակն են ստանում քաղաքականը և, մասնավորապես, իշխանությունը, իրավունքը, օրենքը։ Պատրանք այլևս հնարավոր չէ, որովհետև իրականության բացակայության պայմաններում պատրանքը դառնում է լիովին անիմաստ։ Իսկ քանի որ հասարակական կարգն ու կանոնը միշտ հիմնված են եղել պատրանքի վրա, ուստի դրանք նույնպես հնարավոր չեն. այսօր օրենքը, կարգը և կանոնը փոխարինված են սիմուլյակրներով։ Իսկական իշխանություն այլևս գոյություն չունի, և արդեն երկար ժամանակ է, ինչ ցանկացած տերության ցանկացած առաջնորդ վերածվել է իր իսկ սիմուլյակրին, ու միայն սա է պատճառը, որ դեռևս հնարավոր է ինչ-որ կառավարում։ Հասարակական բոլոր ինստիտուտները մեռել են, իսկ դրանց սիմուլյակրները ստիպված են կազմակերպել սեփական մահվան սիմուլյացիան, որպեսզի դուրս պրծնեն իրենց անպատասխանատու և գոյությունից զուրկ կեցության արատավոր շրջանից։ Նրանք ձևացնում են իրենց մահը՝ վաղուց լինելով մեռած։ Ուստի հենց այս ամենով է պայմանավորված այն իրողությունը, որ «... նախկինում հակված էին թաքցնելու սկանդալը, իսկ այսօր ձգտում են ծածկել սկանդալի բացակայությունը»[16]։

Ժան Բոդրիարի այս հայեցակարգը որքան սադրիչ, այնքան էլ հակասական է։ Նրա գեղարվեստական ոճը, փաստարկման ոչ ավանդական եղանակները, երբեմն էլ փաստարկների բացակայությունը ստիպում են կասկածի տակ առնել ողջ հայեցակարգի վավերականությունը։ Սակայն սույն հայեցակարգի համաձայն՝ սկզբունքորեն հնարավոր չէ խոսել ինչ-որ վավերականության ու առավել ևս հնարավոր ճշմարտության մասին։ Ցանկացած հակափաստարկ կարող է պիտակավորվել իբրև սիմուլյացիա, և բանավեճը կմտնի փակուղի։ Բայցևայնպես ակնհայտ է, որ սիմուլյացիոն աշխարհը դեռևս բացարձակ ամբողջատիրության չի հասել։ Ինչպես վերը նկարագրվեց, ըստ Բոդրիարի, սիմուլյացիոն աշխարհի ծավալումը տեղի է ունենում ժամանակի մեջ, ուստի ինչ-որ պատմականություն առկա է։ Այս ամենից բացի, առկա է նաև ռեալությունը, թեև վերջինիս ներկա գործառույթը մոդելի ալիբին լինելն է։ Բոդրիարը խոսում է նաև «մեր» մասին՝ հայտարարելով, որ «մենք» շրջապատված ենք իշխանության մանեկեններով, և որ «մենք» վերածվել

[16] **Бодрийяр Ж.** Симулякры и симуляция. 2013, с. 35.

ենք «կույր ու մելանխոլիկ», «ողորմելի տերմինալների»: Եվ այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչպես կարող է «ողորմելի տերմինալներից» մեկը, այսինքն՝ հենց Ժան Բոդրիարը, հասկանալ այս ամենը, եթե ինքը միայն «մեզնից» մեկն է, այլ ոչ թե, ասենք, ինչ-որ աստված:

Ամեն դեպքում այս հակափաստարկները չեն կարող հերքել բոդրիարյան հայեցակարգում առկա ճշմարտության ահռելի չափաքանակը: Գուցե շատ մոտ ապագայում սիմուլյակրային աշխարհը հասնի իր ամբողջատիրության լրմանը, իսկ ներկայումս մենք ասես գտնվելիս լինենք փոխակերպվող անցումային իրադրության մեջ: Այսինքն՝ չի բացառվում, որ սիմուլյակրային աշխարհի կայացումը գտնվում է ժամանակի մեջ փոխակերպվող մի ինչ-որ փուլում, իսկ Բոդրիարը, իմաստավորելով իր ժամանակում առարկայացած հասարակական կեցությունը, շտապած, կանխատեսած կամ մարգարեացած լինի:

Իրավաքաղաքական խոսույթում, ի թիվս սրանց և այլոց, **առկա է *ոչճշմարիտի* այնպիսի տեսակ, որը ներկայանում, ընդունվում և լեգիտիմանում է *ճշմարտության* տեղում՝ չթաքցնելով իր *ոչճշմարիտ* լինելը**: Այս լեգիտիմացված *ոչճշմարիտը* իր առկայությամբ ոչ միայն «փոխարինում» է հնարավոր *ճշմարտությանը*, այլև ստվերում իսկական *ճշմարտության* կարիքն ու փնտրտուքի պահանջը: Ժամանակի ընթացքում սա դառնում է համոզմունք, և դրա նկատմամբ քննադատական մոտեցումներն ինքնըստինքյան տաբուացվում են:

Իրավաքաղաքական խոսույթում *ոչճշմարիտի* այս տեսակի ի հայտ գալու և գործառելու պատճառը մի կողմից անձնային կամ հանրային շահն է, մյուս կողմից՝ անելանելիությունը (հաճախ՝ երկուսը միասին): Քաղաքական գործորդները, հայտնվելով անելանելի դրության մեջ, ստիպված ընդունում և լեգիտիմացնում են այլ գործորդի (կոնֆլիկտող և/կամ միջնորդ կողմ) առաջադրած մտակառույցները՝ հստակ գիտակցելով, որ դրանք ճշմարիտ չեն: Տվյալ պահին քաղաքական գործորդը նախընտրում է ընդունել ու լեգիտիմացնել *ոչճշմարիտ* մտակառույցը՝ իբրև չարյաց փոքրագույն: Այսինքն՝ այդ նախընտրությունը, ըստ ամենայնի, ձեռնտու է: Հնարավոր է նաև այնպիսի դեպք, երբ այդ ձեռնտու լինելը բխի ոչ թե ավելի մեծ վնասը շրջանցելու հանգամանքից, այլ ուղղակի լինի օգտակար:

Գիտակցաբար ընդունված և լեգիտիմացված ոչճշմարիտ մտակառույցի մի շարք օրինակների կարելի է հանդիպել հայ-ադրբեջանական կոնֆլիկտի շրջանակներում:

Այսպես, 1920 թ. Լեռնային Ղարաբաղը օտարվեց ՀԽՍՀ-ից՝ հօգուտ ԱդրԽՍՀ-ի՝ քաղաքական-գաղափարախոսական այն արդարացմամբ, որ դա բխում է հայերի և մուսուլմանների շահերից[17]: Միանգա-

[17] Տե՛ս **Ա. Մանասյան**, Ադրբեջանական Հանրապետության սահմանների լեգիտիմության խնդիրը // «ՎԷՄ» համահայկական հանդես, Բ (Ը) տարի, 2010, թիվ 4 (32), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 167:

մայն պարզ է, որ ճշմարիտ չէ, թե այդ օտարումը բխում էր հայերի (և այն մուսուլմանների, որոնք իրենց ադրբեջանցի չէին համարում) շահերից: Այն, որ սա ճշմարիտ չէր, գիտեին և՛ հակամարտող, և՛ միջնորդ կողմերը, իսկ հայկական կողմը գիտեր նաև, որ այդ բռնակցումը սերում է թուրք-ադրբեջանական և բոլշևիկյան ծավալապաշտական նկրտումներից: Հայկական կողմը, պարզ գիտակցելով, որ շահերին վերաբերող հայեցակետը ուղղակի կեղծիք է, լռելյայն ընդունեց իրեն պարտադրված խաղի այս կանոնները՝ հասկանալով, որ տվյալ պահին այլ տարբերակ չկա, և իրավաքաղաքական խոսույթը սկսեց ծավալել արցախահայության *շահերի* շուրջ:

Ներկայումս ադրբեջանական կողմը, ունենալով ԵԱՀԿ-ի և քաղաքական այլ գործորդների հովանավորչությունը, պահանջում է վերականգնել Լեռնային Ղարաբաղի նախահակամարտային ժամանակաշրջանի կարգավիճակը: Սրանով պաշտոնական Բաքուն պահանջում է **(վերա)հանձնել** Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղը: Իսկ հայկական կողմը լրջորեն քննարկում է Ադրբեջանական Հանրապետությանը տարածքներ ***վերադարձնելու*** խնդիրը խաղաղության կամ ԼՂՀ-ի անկախ կարգավիճակի ընդունման դիմաց[18]: Կոնֆլիկտի բոլոր կողմերն էլ (այս թվում նաև՝ ԵԱՀԿ-ն) շատ հստակ գիտեն, որ իրականում Լեռնային Ղարաբաղի ***նախահակամարտային*** կարգավիճակը վերականգնելը բացարձակապես չի նշանակում ***վերադարձնել*** տարածքներ Ադրբեջանին, սակայն քննարկում են:

Ներկայիս պաշտոնական Բաքվի իրավաքաղաքական խոսույթի գերակշիռ մասը պարզապես կեղծիք է: Այդ կեղծիքների այն ադրբեջանամետ հայեցակետերը, որ արտահայտում է ԵԱՀԿ-ն, իսկ հայկական կողմն էլ՝ ստիպված ընդունում, այնպիսի *ոչճշմարտություններ* են, որոնք զբաղեցնում են *ճշմարտության* տեղը՝ ստվերելով *ճշմարտության* վերհանման ու կիրառության կարիքը:

Դատելով վերը նկարագրված ոչճշմարտության տեսակների յուրահատկություններից՝ կարելի է ասել, որ դրանցից ոչ մեկը չունի այն էական հատկությունը, որն ունի այստեղ մեր դիտարկած *ոչճշմարտության* այն տեսակը, որի իմաստը փորձեցինք բացահայտել Ադրբեջան-Արցախ կոնֆլիկտի օրինակով: *Սուտն* ունի նենգ նպատակայնություն, սակայն հայտնի չէ դրա ոչճշմարիտ լինելը: *Ոչճշմարիտի* մեր նշած տեսակը *ստի* նման ունի նպատակայնություն՝ զբաղեցնելու *ճշմարտության* տեղը և խաղալու նրա դերը, սակայն, ի տարբերություն *ստի*, նրա *ոչճշմարիտ* լինելը հայտնի է: *Սխալը* ևս նման է սրան, սակայն ո՛չ միտում ունի և ո՛չ էլ հայտնի է դրա *ոչճշմարիտ* լինելը: *Մանիպուլյացիան*, հարաբերած սրան, առնվազն մեկ տարբերություն ավելին ունի, քան *սուտն* ու *սխալը*: Այն միայն մտային կառույց (հայեցակարգ, հայեցա-

[18] Տե՛ս **Мелик-Шахназарян Л.**, **Хачатрян А.** Нагорно-Карабахская Республика в свете международного права, Ер., 2006, էջ 26:

կետ, տեսություն և այլն) չէ, այլև գործունեություն է: *Քաղաքական նարատիվը, միֆը* և *սիմուլյակրը*, լինելով միայն մտային կառույցներ, մեծապես տարբերվում են սրանից, և էական տարբերությունը *ճշմարիտ-սխալ* չափումից դրանց դուրս գտնվելն է, իսկ *սիմուլյակրը* նաև «հավակնում» է կլանել ու ոչնչացնել այս չափումն ընդհանրապես:

Այստեղ կարևոր է նշել, որ *ոչճշմարիտի* այս տեսակը՝ որպես նոր վերլուծվող և իմաստավորվող մտակառույց, անվան կարիք ունի: Այն պետք է անվանել մի այնպիսի բառով, որը հստակ կտարբերակի *ոչճշմարիտի* այս տեսակը:

«Ոչճշմարտություն» սեռային հասկացության մեջ մտնող բոլոր հայտնի տեսակների անուններն զբաղված են իրենց ավանդական իմաստներով, ուստի սույն երևույթի անվանումը պետք է լինի ինչ-որ նորահնար կառուցարկում: Հակառակ դեպքում այն բառն ու հասկացությունը, որոնք պետք է ըմբռնվեն այն իմաստով, որով առաջարկվում է ըմբռնել *ոչճշմարիտի*՝ մեր վերլուծած տեսակը, «կվերածվի» արհեստական համանիշի՝ տեղի տալով խառնաշփոթության:

Բանալի բառեր – *ճշմարիտ, սուտ, սխալ, կեղծիք, միֆ, նարատիվ, մանիպուլյացիա, սիմուլյակր, իրավունք, քաղաքականություն, խոսույթ*

ГЕВОРГ АКОПЯН – ***О неистинных элементах политико-правового дискурса.*** – В статье описывается и осмысляется неистинный элемент политико-правового дискурса, который ещё не назван. Для этого рассмотрены некоторые виды неистинного в указанном дискурсе, которые названы, осмыслены и объяснены. Анализ этих известных типов неистинного показывает, что ни один из них не выражает сущности явления, которое здесь описано. Пример взят из арцахско-азербайджанского контекста.

Ключевые слова: *истина, неистинное, ложь, ошибка, подлог, миф, нарратив, манипуляция, симулякр, право, политика, дискурс*

GEVORG HAKOBYAN – ***On the Non-True Elements of the Right-Political Discourse.*** – The article attempts to describe and comprehend such non-true elements of the right-political discourse which has not yet been comprehended and named. For this purpose, some types of non-true in the political discourse are discussed, which are named, comprehended, and explained. An analysis of these known types of non-true shows that none of them expresses the essence of the phenomenon described here and presented as an example in the context of the Artsakh-Azerbaijan conflict.

Key words: *true, non-true, lie, false, forgery, myth, narrative, manipulation, simulacrum, rights, politics, discourse*

Ներկայացվել է՝ 17.01.2020
Գրախոսվել է՝ 22.01.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020